ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
30.05.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԿՈՂՔ ԿՈՂՔԻ» ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԿՈՂՔ ԿՈՂՔԻ» ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
1.2 ՀՎՀՀ-ն		02294408
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՏԱՇԻՍՅԱՆ Փ. 59 ԲՆ. 16
1.4 Պետական գրանցման համարը		211.171.1201753
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2021-10-28
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91222414
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		koghkoghqi@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՆԱԻՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Աջակցել հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ երեխաներին և դեռահասներին, զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող և սոցիալական ծանր իրավիճակում հայտնված անձանց և նրանց ընտանիքներին,		
Աջակցել և նպաստել ԿԱՊԿՈՒ և տիպիկ զարգացում ունեցող անձանց ուսուցմանը մշակույթային և կրթական ոլորտում		
Աջակցել մշակութային հիմնահարցերում ստեղծագործողների հեղինակային իրավունքների պաշտպանությանը		
Մասնակցել ներառական, վերականգնողական, զբաղվածության, բուժական և մշակութային հիմնահարցերի քննարկմանը,		
Իրականացնել ներառական, կրթական, ինտեգրման, մշակութային տարաբնույթ միջոցառումներ և փառատոններ։ Իրականացնել դասընթացներ, մասնագետների որակավորման բարձրացման համար, կազմակերպել սեմինարներ և վերապատրաստման այլ դասընթացներ,		
Աջակցություն ցուցաբերել, զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող, սոցիալական ծանր իրավիճակում հայտնված, ԿԱՊԿՈՒ և տիպիկ զարգացում ունեցող անձանց ծնողազուրկ երեխաներին և դեռահասներին և նրանց ընտանիքներին,		
Ստեղծել անհրաժեշտ պայմաններ զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաներին և դեռահասներին, սոցիալական ծանր իրավիճակում հայտնված անձանց և նրանց ընտանիքներին՝ բուժման, վերականգնման, կրթության, զբաղվածության և սոցիալական ադապտացիայի համար։ Ճգնաժամային իրավիճակում հայտնված զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող անձանց և ծնողազուրկ երեխաներին և դեռահասներին աջակցություն, ուղորդում և օգնություն ցուցաբերել ողջ կյանքի ընթացքում		
Սեմինարների, գիտաժողովների, աշխատաժողովների և կրթական ծրագրերի միջոցով նպաստել ոլորտի խնդիրների վերհանմանը և լուծմանը։		
Կազմակերպել սպորտային, ժամանցային կենտրոններում, ճամբարներում, հանգստյան տներում զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող անձանց և ծնողազուրկ երեխաների և դեռահասների ժամանցը և հանգիստը։		
Հաշմանդամության հիմնախնդիրների հասարակության ուշադրությունը հրավիրելու նպատակով մամուլի և գիտահանրամատչելի հեռուստառադիոհաղորդումների միջոցով իրագեկել աշխատանքների իրականացումը		
Կազմակերպել և ֆինանսավորել արհեստավարժ մասնագետների, հատուկ մանկավարժների, հոքեբանների վերապատրաստումը։ Կազմակերպության կողմից ֆինանսավորել դասընթացների մոնիթորինգը և գնահատումը։		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		2
4.2 Կամավորների թիվը		
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		2

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1				

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Հոփ ֆոր Դրիմս երաժշտական ներառական նախագիծ	Ք.Երևան, Ք.Աբովյան, Ք.Սևան	Ավարտված	Համերգային ելույթների միջոցով տարածել ներառականությունը՝ Հոփ ֆոր Դրիմս նախագծով ստեղծել հավասար պայմաններ բոլորի համար զարգացման առանձնահատկություններ ունեցող անձի ինտեգրում հասարակության մեջ	ՀՀ մարզերում մոտիվացում՝ իրականացնելու նման ծրագրերում ներգրավելու հաշմանդամ անձանց: Առանձնահատկություններ ունեցող անձանց մոտ կատարողական արվեստի զարգացում, հաշմանդամների համար մասնագիտական կողմնորոշման հնարավորության ընձեռում:
2	2024 թվականին Կողք-Կողքի միջազգային ներառական երաժշտական արտ փառատոն	Ք.Երևան	Ավարտված	Արվեստի և երաժշտության միջոցով տարածել մարդասիրություն և ապացուցել, որ հաշմանդամությունը դատավճիռ չէ և չի կարող խոչընդոտ հանդիսանալ, երբ անձը հնարավորություն ունի կատարելագործվելու և՝ ինքնաարտահայտվելու՝ արվեստի ցանկացած բնագավառում:	Շնորհաշատ հաշմանդամ պատանիների և երիտասարդների տաղանդի բացահայտում, արվեստի միջոցով վերականգնողական տարբեր կազմակերպությունների համախմբում, կրթական և ներառական ոլորտի մասնագետների փորձի փոխանակում, մասնագետների վերապատրաստում:
3	Ներառական Երևան	Ք.Երևան	Ավարտված	Համախմբել պատանի երաժիշտներին, մասնագետներին, զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաներին	Համախմբել զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաներին

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	35,478,300
8.2 Գույքը	
Ընդամենը	35,478,300

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	19,497,300	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
2	4,981,000	Երևանի քաղաքապետարան
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	24,478,300	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	35,478,300
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		35,478,300

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	24,478,300
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		24,478,300

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Գովազդային ծառայություններ	6,000,000	Կողք-Կողքի միջազգային ներառական երաժշտական արտ փառատոնի շրջանակներում
Ընդամենը		6,000,000	

Նշումներ

2024թ-ի փաստացի մուտքերից 19,497,300 ՀՀ դրամը ստացվել է ՀՀ կթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, 4,981,000 ՀՀ դրամը Երևանի քաղաքապետարանից, 6,000,000 ՀՀ դրամը <<ՍՈՐՏՍՈՐ>> ՍՊԸ-ից համաձայն գովազդային ծառայությունների մատուցման պայմանագրի և 5,000,000 ՀՀ դրամը Իմ Քայլը հիմնադրամից:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____0_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Digitally signed by SARGSYAN NAIRA 6902770352

GM CONSULT LLC

«ԿՈՂՔ ԿՈՂՔԻ» ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՂՔ ԿՈՂՔԻ» ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կողք կողքի» ներառական կրթամշակութային հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «Կողք կողքի» ներառական կրթամշակութային հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է

տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:
  Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան - 30.05.2025թ.

Ջի Էմ Քոնսալթ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր Անահիտ Միրզոյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.05.2025 16:13